



ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն կողմով.

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Մարտի 20-ին թղթերի բորբոքումից վաճառակցի գէորգեան ձեռնարանի նախ-
կին ուսանող և կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան մատենադարա-
նի գրապահ

Գ Ա Ր Ի Է Լ Ո Ւ Ր Է Կ Լ Ե Ա Ն

Թաղումը տեղի կունենայ մարտի 23-ին, շաբաթ օր: Յուզարկաւորութիւնը՝ առա-
ւօտեան ժամը 9-ին հանդուցեայի բնակարանից (Սօլդատկայա փողոց, տուն
Բօրնովի, № 9) դէպի վանքի մայր եկեղեցին, և ապա խօշիվանքի գերեզմանատունը:
Հօգեհանդիսաւ, ուրաւ ժամը 7-ին:

1—2

Տ Ի Կ Ի Ն Կ ա ա ր Ի Ն Է Մ Կ Ի ր չ Ե ա Ն Ի Ն Ֆ Ի ա ճ Ե ա Ն ց Ի ր օր քո չ հ Ե ա,
սրտի ցաւով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, առաջինը իր
ամուսնու, միւսները իրանց հօր՝

Հ Ա Մ Բ Ա Ր Ձ Ո Ւ Մ Մ Կ Ի Ր Տ Չ Ե Ա Ն Է Ն Ֆ Ի Ա Ճ Ե Ա Ն Յ Ի

մահւան մասին Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի օր, մարտի
21-ին, առաւօտեան 10 ժամին, դէպի վանքի մայր եկեղեցին, իր բնակարանից,
Նիկօլաւսկայա հրապարակի, ծխախոտի գործարանի շինութեան մէջ:

Ամբողջը կը կատարվի չորեքշաբթի, մարտի 20-ին, հանդուցեայի բնակարա-
նում, երեկոյեան 6 1/2 ժամին:

2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր ինքնուրոյն գրականութիւնը.— Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրէջօր. Ընկերակցութիւններ կազ-
մելու միտքը. Նամակ վերին-Աղուլիսից. Նամակ
խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. վերջին տեղեկութիւններ. Սուրա-
նի գերութիւնը. Նամակ Պարսկաստանից.—
ՀԵՌԱՎԻԴԱՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Աշխարհի բաները.

ՄԵՐ ԻՆԴՆՈՒՐՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայոց ինտելիգենցիայի մի բազմամարդ
ժողովում, այն է Հրատարակչական ընկե-
րութեան ժողովում, երբ խօսք բացվեց մեր
թարգմանական և ինքնուրոյն գրա-
կանութեան մասին, ընդհանուր կարծիքը
այն էր, որ մեր ժամանակակից ինքնուրոյն
գրականութիւնը այժմ վերին աստիճանի
ամուլ է, ոչինչ խոշոր, աչքի ընկնող ստեղ-
ծագործութիւն չէ տալիս, և միանգամայն
խեղճված է թարգմանական գրականու-
թեան տակ:

Անկասկած, վերին աստիճանի ցանկալի է,
որ մեր գրականութեան ինքնուրոյն ծիւղը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ա Շ Ի Ս Ի Ր Հ Ի Ս Բ Ա Ն Ե Ր Ը

(Տառիս պատմաներից)

II

Ժ ա ո ա ն ց Գ ո ւ թ Ի Ն

Ս Ե ր այն տարին... Ես համարեա երեկայ
էի: Մեր ժամանակ այսպէս չէր աշխարհը. մար-
դիկ միամիտ էին: Մեր Մարիամը, ասում էր,
այժմ տառնեւրեք տարեկան է: Ես հենց այդ հա-
սակում կը լինէի այն ժամանակ: Բայց ինչ էի
հասկանում:

Նամանք էին երեւում երկնքում: Աստղերը
թափվում էին. մեր քահանայն կէս գիշերին տե-
սել էր զարմանալի լույսեր, որոնք խաղում էին
երկնքի երեսին: Լուսինը մի անգամ խառնու-
միս զիւրում մարդ չէր մնացել, որ վատ երեւոյ
չը տեսնէր: Հաւերը կանչում էին աքաղաղների
նման: Գիւրք բացին. վատ և շատ վատ բաներ
էր ասում գիւրքը:

Սուտ չէին այդ բոլոր նշանները: Շուտով վատ
լուրեր եկան մեր գիւղը: Պատմում էին, որ Ա-

զարգանար, և մենք կարողանայինք մատ-
նանիշ անել հայոց հասարակութեանը՝ մեր
սեփական գրողների աշխատութիւնների և
ստեղծագործութեան վրա: Սակայն, որքան
էլ դա դուր չը գայ մեր ինքնասիրու-
թեան, որքան էլ մեզ համար ծանր չը
լինի խոտովանել, բայց և այնպէս ճշմար-
տութիւնը ստիպում է ասել, որ մեր գրա-
կանութեան ինքնուրոյն ծիւղը ընդհանրա-
պէս կանգ է առել, և մենք չենք կարող
վերջին տարիները հրատարակած գրուածք-
ների մէջ մատնանիշ անել որ և է վրա-
կան, գրամատիչական, բանաստեղծական
հեղինակութեան վրա, որը իրականում ու-
նենար մի աչքի ընկնող գործ համարվել:

Գրականութեան մէջ լինում են պերիօդ-
ներ, ժամանակամիջոցներ, երբ խոշոր առ-
ջանքների մեռնելով, հրապարակ չեն դալիս
նրանց հաւատարմ, կամ նրանցից բարձր տա-
ղանդներ, երբ ստեղծագործող միտքը կար-
ծէք մի առ. ժամանակ կանգ է առնում:
Եղած գրողները հանգէս են գալիս իբրեւ
հետեւողների, քան թէ ստեղծագոր-
ծողների, իսկ նոր գրողները՝ իբրեւ գեռ-
ևս չը կազմակերպված, իրանց ընդունա-
կութեան և տաղանդի զազախակէտին չը

բաղնի միտ ափում մեծ պատրաստութիւններ
են կատարվում: Դա՛նք հրաման էր տուել, որ
շատ մարդ հաւաքեն, զօրք կազմեն: Ինքը պիտի
անցնէր զօրքի գլուխը և նստից պիտի կռիւ-
ղուրս գար: Նրա անունը Աստա-Շահ էր: Առա-
ջին անգամը չէր նա զօրք անցկացնում մեր
կողմերը: Տեսել, լսել էին թէ ինչ է նա. և
սարսափը տարածվեց ամեն կողմ: Ոչ ոք յոյս
չունէր, որ այդ զարհուրելի մարդը կը խնայէ
այս անգամ, քիչ կը կոտորէ: Ասում էին, որ նա
այս անգամ աւելի կատաղած է և այնպիսի բա-
ներ պիտի անէ, որ աշխարհը դարձանայ...

Մեր քահանայն, տէր-Վուկասը, որը երկու ան-
գամ մարդկանց եկեղեցի էր կանչում: Այդտեղ
չուրում էին ամենքը, երեսները հողին էին քը-
սում, աղաչում էին, լաց էին լինում: Տէր-Վու-
կասը «Տէր ողորմեա» էր ասում, Աստուած էր
կանչում և ամենքին խրատում էր օր ու գիշեր
աղօթք անել, մատաղներ խոտառնալ, ողորմու-
թիւն տալ թշուառներին, որպէս զի անցնի
Աստուծու պատիժը:

Ինձ և իմ հասակակից երեխաներին էլ տա-
նում էին եկեղեցի, հասկացնում էին, որ պէտք
է լաց լինել, որովհետեւ Աստուած երեխաների
մէ և նոյն բանն էին պատմում: Գալիս է, ա-
նում էին, Շահը. մեր ձեռքին է նրան այս կող-
էինք: Իսկ երբ դուրս էինք գալիս եկեղեցուց,

հասած, վերջնականապէս չը ձեռնկերպված
ոյժեր: Եւ մեր ժամանակակից ինքնուրոյն
գրականութիւնը այդ վիճակի մէջ է: Բա՛ն-
քի, Գրիգոր Արծրունի, Յերենց, Պատկա-
նեան, Պեշեքթաշեան, Նալբանդեան, առ-
պարէզի վրա չեն: Մեր հին գրողներից նը-
րանք, որոնք գեռ կենդանի են, կամ այլ ևս
ոչինչ չեն ստեղծագործում, կամ եթէ մի
բան գրում են, դա ոչ այլ ինչ է, եթէ ոչ
հին գրուածքների, հին ստեղծագործու-
թեան կրկնութիւն, և շատ անգամ
անշնորհ կրկնութիւն... Իսկ նոր, երիտա-
սարդ գրողները գեռ ևս գրական աշխար-
հի վրա արնապետող ոյժ չեն կազմում:

Մենք հաւատում ենք մտքի առաջադի-
մութեան և համոզված ենք, որ մեր գրող-
ների շրջանից դուրս կը գան շատ խոշոր,
զուգէ և տաղանդաւոր նախորդներին գերա-
զանցող ոյժեր. բայց քանի որ այդ այժմ
չը կայ, քանի որ ինքնուրոյն գրականութիւ-
նը չէ կարող առ այժմ գոհացնել
հասարակութեան մտաւոր պահանջներին
և նրա ընթերցասիրութեան, ուրիշ ելք
չէ մնում, բայց եթէ ոյժ տայ, առաջ
մղել թարգմանական գրականութիւ-
նը, ապով մեր հասարակութեան թէ
եւրօպական և թէ ռուսաց մտքի զանազան
արտադրութիւնները, ձգտելով ստեղծել մի
ամփոփ, ամբողջացրած թարգմանական
գրադարան, պատմական, փիլիսոփայական,
վիպական, պոեզիոյն տարական աչքի ընկնող
գրուածքների մի ամփոփ գրականութիւն:
Եւրօպական մտքի շատ արտադրութիւն-
ները, թէ է նրանք մեզ համար ինքնուրոյն
չեն, բայց իբրեւ վերին աստիճանի տաղան-
դաւոր և հիմնական գրուածքներ, կարող
են այնպիսի առատ, և այնքան թարմացնող
նիւթ մատակարարել հայոց ընթերցող
հասարակութեան, որպիսին երբեք չեն
կարող մատակարարել հայոց շատ գրողնե-
րի զրէ՛ր տակից դուրս եկած մեծ մասամբ
անշնորհ, անտաղանդ և խաղ աշխատու-
թիւնները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օ Ր Է Յ Օ Ր

XVIII

Միայն արեւելքը չէ, որ անսահման է. անսահ-
ման է և յիմարութիւնը, մանաւանդ «Но-
вое Время» լրագրի էջերում, որի մի նոր աղա-

մոռանում էինք ամեն ինչ և էլի մեր խաղերն
էինք անում անհոգ, ուրախ, ինչպէս երեխաներ:

Մի օր մեր գիւղը մտան մի խումբ ձիաւոր-
ներ: Ամենքի գլխին ջուր մաղվեց: Մեծ ջուրս,
մայրս, մեր հարեան կանաչը մեր տան սրահում
այն ու վաչ էին անում, միմեջում են ինչ-որ
անհասկանալի խօսքեր: Ես թողի իմ ձօթին ու
պատառը, իմ տիկնիկը և դուրս վազեցի, կանգ-
նեցի մեր հարեանի կողքի ծաղիկ: Ամեն տեղ
տեսայ իրարանցում: Մինչև երեկոյ գիւղամէ-
ջում հաւաքված էին մեր մարդիկ, խօսում էին,
վճռում Ահմեդից եկողները պատմում էին, որ
նոր եկած ձիաւորները նստած են մէջտեղ,
սարսափելի բաներ են խօսում, իսկ գիւղի մար-
դիկ խնդրում են, աղաչում են... Երեկոյեան
հայրս եկաւ և ասաց, որ մի կերպ հաշտվել են
չահեսանցիների հետ, տուել են երկու հարիւր
ոչխար, յիսուս կով, հարիւր չուալ ցորեն և քը-
սան և հինգ ոսկի:—Ես ոչինչ չէի հասկանում...
Հետեւեալ օրերն էլ եկան ձիաւորներ: Ելի մի
և նոյն բանն էր կրկնվում: Գիւղը վախից տա-
լիս էր այն ամենը, ինչ պահանջում էին զանա-
զան կողմերից եկող թուրք ձիաւորները: Գրանդ
մի և նոյն բանն էին պատմում: Գալիս է, ա-
սում էին, Շահը. մեր ձեռքին է նրան այս կող-
մերով տանելը կամ չը տանելը. տուէք որ ա-

յոյցը տուէք Սուլօրին իր օրգանի մարտի 13-ի
և 14-ի համարներում:

Մեր խորին համոզմունքն է, որ Սուլօրինի
հման գրողներին հետ որ և է հարցի մասին
պօղեմիտ ակնել և պատասխանել նրանց, կը
նշանակի մի աննպատակ, ապարդիւն աշխատան-
քով զբաղվել: Դա ապացուցված է երկար տարի-
ների փորձերով: Իսկ հայերի վերաբերմամբ
բռնած նրանց դիրքը՝ մի նոր ապացոյց.— Ինչ-
քան ուզում էք հերքեցէք, որքան ուզում էք
փաստեր բերեցէք, ցոյց տուեցէք, որ բոլոր դը-
րածները՝ առաջին տողից մինչև վերջինը՝ կեղծ
են, չինձու, սուտ, յետին մտքերով գրված,— մի
և նոյն է. նրանք չեն սխալվել, չեն խղճահարկի
և չեն ամաչի, այլ ջգրոււ աւելի էլ անմիտ
ծայրահեղութիւնների կը դիմեն, ինչպէս այդ ա-
րեւ է Սուլօրինի օրգանը մարտի 14-ի համա-
րում...

Սակայն, եթէ մենք, այն համոզմունքը ունե-
նալով հանդերձ, թէ այդ լրագիրներին չը
սկսեք է պատասխանել և անտես պէտք է ա-
նել, մի և նոյն ժամանակ, երբեմն երբեմն հարկ
ենք համարում ձայն բարձրացնել այդ անկեղծ
գրապատութիւնների և հակահակական յարձա-
կումները դէմ, այդ միայն այն պատճառով, որ
Սուլօրին և ընկ. չը տարածեն, թէ և խուլ կեր-
պով, այն կարծիքը, թէ իրանց ներքին չված է
այդպէս գրել, և այդ պատճառով ոչ ոք չէ կա-
րող պատասխանել և հերքել նրանց գրածները:
Մենք անկեղծօրէն ցանկանում ենք, որպէս զի
չը լինի և ոչ մի հայ, որը մի քայլ, մի վայր-
կեան անգամ կարծէր, թէ այդ լրագիրներին
կարծիքները կարող են որ և է տեղից ներ-
շնչված լինել, և այդ պատճառով չէ կարելի
նրանց դէմ գրել, հերքել, ծագրել և վերջապէս
միջոցը այդ բոլորը մի բառով՝ յիմարութիւն
թիւն:

Ուրիշ աւելի յարմար բառ չենք գտնում, քան
թէ այդ բոլոր՝ յիմարութիւն: Եւ ճշմարիտ,
կատարեալ յիմարութիւնը միայն կարող է թե-
ւազրել մեղադրել հայերին այն բանի համար, որ
նրանք իրանց երեխաներին տալիս են պետա-
կան գիմնադրանքներ, համալսարաններ, և կամ
այն, որ հայերը ուժիտ են դնում ուղղափառ ե-
կեղեցիները: Դուք կարծում էք, ընթերցող, դա
կատար է: Բոլորովին ոչ:

Եթէ Սուլօրին և ընկ. մեղադրում են հայերին
հակապետական ձգտումների մէջ, առաջ բերե-

զատ մնաք նրանց: Եւ մերոնք տալիս էին ինչ
որ ունէին: Իսկ եթէ համարձակվում էին ասել,
որ պահանջվածը շատ է, այն ժամանակ թուր-
քերը սպառնում էին, որ իրանք կը յարձակվեն
գիւղի վրա, կը կոտորեն, կը տանեն:

Հինգ օր շարունակ տարան մեր ունեցածը:
Մեր մարդիկ սարսափահար էին. տեսնում էին
որ Արաբսի այս և այն արիւր բոլոր թուրք գիւ-
ղերը ոսկեր են կանգնել և փովել են ամեն տեղ,
հաւաքում են ամեն բանը.— Իսկ Շահը: Ասում էին
որ նա օրից օր մօտենում է մեր կողմերին...
Սկսեցինք օրը երեք անգամ չըբել եկեղեցում,
լաց լինել: Տէր-Վուկասը կուշ էր գալիս սեղանի
առաջ, քարի վրա, գլուխը դնում էր հողի վրա
և այնպէս երգում էր, խեղճովելով արտասուք-
ներով: Եկեղեցին դառն էր մի սև պատուհան...

Իմ հայրը գիւղի մեծաւորներից մէկն էր: Մեր
տունը շատ հարուստ էր. ամեն օր մեր բակում
բան և չորս կով էր կիվում: Ամեն տարի, ջատ-
կին, մենք չուանքերով գարի և ցորեն էինք բա-
ժանում չուանքներին: Ով որ մի ցաւ ու կարիք
ունէր, հօրս մօտ էր գալիս, նրանից էր հարց-
նում: Այժմ մեր բակը դատարկվեց: Հայրս ինքն
էր տալիս, մեր կովերը, ոչխարները տանում էին
թուրքերը: Մայրս ծածուկ լաց էր լինում, իսկ
հայրս շարունակ ասում էր, որ պատրաստ է իր

լով չինձու փաստերի մի անթիւ, անվերջ քա-
նակութիւն, — դա զեռ. հասկանալի է, ու-
րովհետեւ այդ լրագրիւնների փեշակն է՝ մըտ-
քերը պղտորել, և մտքերը պղտորելու համար
փաստեր հնարել: Բայց միթէ նպատակին հաս-
նելու համար՝ մօղա է և անվերջ յիմարութիւն-
ներ ասելը, ինչպէս այն, թէ ինչու են հայերը
ուխտ գնում ուսուցիչ երեւելիները և կամ ինչու
են հայ երեւելիները և երիտասարդները մտնում
պետական գիւմնազիւնները և համալսարանները:
Սուլօրինի, Մեհաբեկի, Պետրոսիկի և զբանց
նմանների փափագն է, որ ոչ մի աղք իր մայ-
րենի լեզուն չիմանայ և խօսի միմիայն պէտա-
կան լեզուն: Դառ լաւ. Բայց չէ որ այդ նպա-
տակին հասնելու, այդպիսի լեզուով խօսելը սո-
վորելու համար պէտք է հայ երեւելիները, ինչ-
պէս և թուրք, վրացի, ֆինն, գերմանացի երե-
ւելիները մտնեն պետական դպրոցները և սովոր-
են պետական լեզուն: Եւ ինչպէս սովորեն, ե-
թէ դուք պետական միջնակարգ և բարձրագոյն
դպրոցների դռները կը փակէք նրանց առաջ:
Կամ կարծում էք, որ կովկասում հայը, վրացին,
թուրքը ծնված օրից զիսկ պետական լեզուն:
Կա, ճշմարիտ, կատարեալ խենդութիւն է:
Մի կողմից քարոզել որ ամեն մի ուսուցիչը պէտք
է, ինչ աղքի և պետական նա, պէտք է իմանայ
պետական լեզուն, իսկ միւս կողմից քարոզել,
թէ պէտք է փակել պետական դպրոցների դռն-
ները հայերի համար, որովհետեւ մի յայտնի առ-
կուս է՝ Նոյն խենդութիւնն նշանակելով մէկն է և
այն, որ այդ տեսակ լրագրիւնները բողոքե-
լով որ հայը, իբրեւ վաճառական, իբրեւ կալուս-
տաւոր հարստահարող է, փոխանակ քարոզելու,
որ պետական բոլոր հիմնարկութիւնների դռնե-
րը բաց լինեն բոլորի համար, քարոզում են
հային չընդունել ոչ մի ծառայութեան մէջ,
ոչ մի հիմնարկութեան մէջ, որպէս զի հայը,
կամայ ակամայ, ոչ մի տեղ պաշտօն չը գտնե-
լով, ոչ մի ապրուստի մասը չունենալով, զիմի
միակ ազատ պարագայում լինի՝ վաճառական
ն ու լին ան, ուր մի յայտնի աստիճանի շահա-
սիրութիւնը անխուսափելի է...

Եթէ Սուլօրինի նման հրատարակածները
իրօք, արտով ցանկանում են, որ հայերը չը ներ-
կայացնեն մի կողմից ան առաջ անցած տարր, պէտք է
քարոզեն, որ հայի առաջ բաց լինեն, ինչպէս
պետական դպրոցներ, այնպէս և պետական
բոլոր հիմնարկութիւնների դռները, որտեղ այդ
ընդունում տարրը կարող է իրական ծառայու-
թիւն մատուցանել պետութեան, և ոչ թէ քա-
րոզեն, թէ պէտք է հայերին հեռացնել թէ
գաղութներից և թէ պետական բոլոր հիմնարկու-
թիւններից, նպատակով այդպիսով հայերից մի
կողմից ան առաջ անցած տարր կազմելուն, որը, մեր
խորին համոզմունքով, բոլորովին ցանկալի չէ
ընդհանուր պետական տեսանկէտից:

Բայց աստիճան լաւ պիտի:

Խ. Մարտիան

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԻՑԻՐ

Թէ գիւղացիները, թէ կալուածատէրերի և թէ
արհեստագործների կողմից մենք անգաղար զան-
գառ ենք լսում, թէ նրանց ճշմունտն անտարա-
կանները, խանութպանները և վաճառահանները:
Արդիւնաբերողները զանգառում են ասլանը
առնողների դէմ և իրանց արհեստի կամ պա-
րագումները անաջողութիւնը բացատրում են վն-
ճառակներով, ազատութեամբ և չարակամու-
թեամբ:

Միակողմանի և սխալ կը լինէր այդպէս ընդ-
հանրացնել խնդիրը և երկրի արդիւնաբերութեան
ընկած վիճակը բացատրել միայն կեղծքիւնների և
հարստահարիչների աղքատութեամբ: Բայց, ան-
կասկած, արդիւնաբերողների զանգառը ունի իր
չափ իրաւացի կողմերը և նա արժանի է խոր ու-
շադրութեան: Չարքը տեղի ունի և նրա դէմ
պէտք է կուսել ուժեղ կերպով:

Չանաղան միջոցներից, որտեղ պէտք է դործ
գրվեն այդ չարքերի ուժը թուլացնելու համար,
մենք կանգ կառնենք այս անգամ ընկերակ-
ցութիւններ և երկրի միւս, որտեղ զաղափարը թէ
անցել է և մեր երկիրը, բայց դեռ չէ կարողա-
ցել իրազեկութիւն ստանալ:

Կանխարձեւ անա մի քանի տարի է, որ խո-
սում են գինեգործական ընկերութիւն կազմե-
լու մասին և վերջապէս այս տարի ընտրել են
մի անաւաճողով, որ անկում է այդ ընկերակ-
ցութեան ծրարները: Գորու գաւառի կալուածա-
տէրերը, ինչպէս յայտնված էր «Մշակ» մէջ, դի-
մել են երկրագործութեան միջնարկութեան և
խնդրում են հաստատել արդիւնաբերական ըն-
կերակցութեան ծրարները: Նոյն միտքը յղացել
են Կախիթում, Գուրմախի նահանգում և այլն:

Ընկերակցութիւններ կազմելը աչքի առաջ ու-
նի երկու գլխաւոր նպատակ. առաջինը, ընկե-
րական ուժով մեծացնել արդիւնաբերութիւնը,
միջոց ունենալ մեծ վաճառանոցների հետ կապ
հաստատել, և երկրորդ՝ ծախսել այնպիսի կառու-
րեւագործութիւններ արդիւնաբերութեան մէջ,
որտեղ ազնուացնում են արդիւնը և որտեղ մշտ-
նելը անկարելի է առանձին առանձին մանր ար-
դիւնագործների համար:

Ընկերակցութիւն կազմելով կարելի է լուրջ
կերպով առաջ տանել սկսած գործը, պարտա-
տել միատեսակ լաւ ասլանը և այդպիսով գրա-
ւել մեծ վաճառանոցի ուշադրութիւնը: Ներկա-
յում, երբ զանազան արդիւնագործներ միմեան-
ցից անկախ են գործում, ոչ մի կապ չունենալով
միմեանց հետ և յաճախ նոյն իսկ թշնամաբար մի-
մեանց վնասելով, անկարելի է այնպիսի արդիւն
արտադրել, որ մի յայտնի չափի, ճաշակի և պա-
հանջի ենթարկվի. իսկ երբ այդ չը կայ, ոչ մի
լուրջ և բարեխիղճ ֆիրմա չէ կարող մեծ և
մնայուն գործ սկսել և կապ հաստատել տեղա-
կան արդիւնագործների հետ: Մինչդեռ ընկերակ-
ցութիւնները այդ կարողութիւնը և գերութիւնը
կը տան, ինչպէս այդ ցոյց են տալիս Եւրոպա-
յում եղած փորձերը, ուր մեծ արդիւնագործա-

կան ձեռնարկութիւնները ընկերակցութիւնների
միջոցով են կատարվում:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան
մէջ ներկայումս մի քանի խնդիրներ են յա-
րուցված, ուր ընկերակցական ձեռնարկութիւն-
ները պէտք է նշանակութիւն ստանան: Այդ
խնդիրներից մէկն է ոչխարատէրերի ընկերակ-
ցութեան խնդիրը, որ այժմ հերթական է: Այս-
կը զան ծխախոտագործական, գինեգործական և
այլ ընկերակցութիւնների խնդիրները:

Մեր կողմից կարող ենք միայն ցանկալի, որ
ընկերակցութիւնների մէջ գործող անձինք ա-
ռանձին եռանդով և անձնութեամբ գործեն,
որպէս զի առաջին փորձերը պակսելին աջող
գործունէութեամբ: Առաջին աջող փորձերին կը
հետեն և միմեանք աւելի գերութեամբ:

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱՎՈՒՆՍԻՅ

Մարտի 3-ին

Մտնում է Նորին Կայսերական Մեծութեան
Նիկոլայ II-ի թագադրութեան օրը: Ամբողջ
Ռուսաստանում հարկաւոր քաղաքներ և գիւղեր
ձգտում են որ և է կերպով օգտուէտ կացուցա-
նել այդ օրվայ յիշատակը:

Յանկալի կը լինէր, որ մենք՝ հայերս էլ, աշխա-
տէինք օգտակար հիմնարկութիւնների միջոցով
անմոռանալի շարժանք այդ օրը: Մեր գաւառա-
կան քաղաքներից չստանալ և համարեա բոլոր մեծ
գիւղերը չունեն զբաղարան-ընկերացարաններ:
Գրադարան-ընկերացարանների օգուտը անկասկած
ամենին յայտնի է, նա կարող է որոշ չափով,
բացի միւս օգուտներից, զաղաքներէ և այն
արտունջը, որ երկար ժամանակ է ինչ լավում է
մեր մամուլի մէջ այն մասին, թէ մեր ծխական
ուսումնարանները բաւարար կերպով գրագիտու-
թիւն չեն տարածում: Դառ անգամ և շատ տե-
ղեր ինքն աշակերտն էլ ուզում է ընկերացանու-
թեամբ անցկացնել պարզա ժամանակը, բայց
գրքեր չը կան:

Մենք կառավարելէնք զբաղարան-ընկերացա-
րաններ բանալով յարգել առաջիկայ թագադրու-
թեան յիշատակը: Ի ճարելէ, զբանով մենք մեր
ժողովրդի ընկերացանութեան պահանջին լիովին
բաւականութիւն չենք լինի առած, սակայն չը
սկսի մոռանալ, որ շրջաններ չընթանալ չէ:

Հրախրում ենք զբաղարան-ընկերացարանի կամ
զբաղարան ուրիշ հաստատութեան կարիք ունե-
ցող գիւղերի և քաղաքների բանիմաց երիտա-
սարդների ուշադրութիւնը այս կարեւոր խնդրի
վրա:

Ն. ԱՂ.

ՆԱՄԱԿ ԽՄԻՍԿԱՐՈՒԹԱՆ

Սալիսերէթ, մարտի 11-ին

Սալիսերէթ գիւղի հայոց դպրոցի հոգաբար-
ձութիւնը, ստանալով ձեռ խմբագրութիւնից յո-
գուտ մեր չըսուր դպրոցի հանգուցեալ Արգար
Աղամեանի ժառանգներից նուիրած 75 բուքլի,

սրանով իր խորին հորհրակալութիւնն է յայտ-
նում թէ յարգելի նուիրատուներին և թէ խոմ-
բագրութեանը մեր դպրոցը անտես չանելու
համար և մի և նոյն ժամանակ խնդրում ենք
տպագրէք մեր այս նամակը:

Նախագահ՝ Գառար Բաճ, Տէր-Գառարեան,
Աղամեան՝ Եւրօ խօջայեանց, Ալեքսի Տիւ-
տիկեանց:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արտաքին գործերի մինիստր Իլյան Լօրանով
Բոստոնի, մարտի 14-ին ընդունեց թիւրքաց
սուլթանի կողմից ուղարկված փեմալը բէյ փա-
շային և ֆենան բէյին: Փեմալը բէյը յանձնեց
Իլյանին թիւրքական «Նիշան Իմթիալ» բարձր
չընշանը: Նոյն օրը օսմանեան պատուիրակնե-
րը այցելեցին մինիստր կոմս Վօրոնցով-Գալի-
փին, արտաքին գործերի մինիստր օգնական Շիշ-
կինին, յետոյ Ֆրեդերիկին, կոմս Կապիտանին,
կոմս Բիբոպին և Իլյան խառնակովին:

«НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը այն կարծիքն է
յայտնում, որ հարկաւոր է Ամենայն հայոց Կա-
թողիկոսի ակտը Էջմիածնից փոխադրել Պե-
տերբուրգ:

Երեւաթիւ, մարտի 19-ին, կայացաւ կովկա-
սեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստը,
Իլյան Գրադարանի նախագահութեամբ: Ժողովը
ընտրեց երկու յանձնաժողով՝ մէկը՝ Նիժնի-Նովո-
գորոդի ցուցահանդէսին մասնակցելու գործը ա-
ռաջ տանելու, իսկ միւսը՝ ծխախոտագործ-
ների ժողով հրաւիրելու համար նախապատ-
րաստութիւններ տեսնելու: Յետոյ Ա. Քալան-
թար կարգաց իր զեկուցումը անդրկովկասեան
բուրգ արդիւնագործողների կարիքների մասին և
մանրամասն քննելով այն բոլոր անկանխութիւն-
ները, որտեղ վնասում են բուրգի առեւտրին, յայտ-
նեց այն միտքը, թէ պէտք է բանալ բուրգի կենտ-
րոնական պահեստ և կազմել ոչխարապահների մի
ընկերութիւն: Ժողովը համալրութեամբ ընդու-
նեց այդ առաջարկը և ընտրեց յանձնաժողով
ընկերութեան կանոնադրութիւնը մշակելու հա-
մար:

Մեզ խնդրում են յայտնել, որ Բարեգործա-
կան ընկերութեան գրասենեակը Զատիկ առի-
թով ստացել է նուէրներ չըսուրների և տառա-
պեղների օգուտին հետեւալ անձներից. — Կ. Մուկե-
նեան — 5 բուքլի, Պ. Ալիբէկեան — 5 բուքլի, գեր-
դաստ Լուսինեան — 2 բուքլի, ընդամենը՝
12 բուքլի:

Վրաց կանաչը մի ընկերութիւն կազմեցին
Թիֆլիսում, որի նպատակն է միջոց տալ ընկե-
րութեան անդամներին էժան գնով ձեռք բերելու
կենսական միջոցները և այլ անհրաժեշտ իրերը,
նոյնպէս և վերականգնել կար ու ձի և ձեռա-
գործի արուեստը: Այդ նպատակով ընկերութիւնը
հիմնում է Թիֆլիսում մի առեւտրական տուն:

Կով ինձ դէպի տուն քարչ տուեց, սաստիկ ձը-
գեց մաղերս, խփեց գլխիս և ասեց.

— Հողի բաժին դառնա... Թուրքերից չես
վախում:

Ես վախում էի, սաստիկ էի վախում և դողում
էի, խօսել չէի կարողանում: Մայրս էլ անիծեց
ինձ, ջուր խմացրեց, որ վախս անցնի և ապա
սկսեց սիրտ տալ:

Չը գիտեմ որտեղ էր հայրս: Նա տուն եկաւ
և պատմեց, որ գալիս է Ֆարուս-խանը: Նա Ա-
րաքի միւս կողմումն էր ապրում: Հաւաքել էր
իր զօրքը, անցնում էր մեր կողմով դէպի Երե-
ւան, ուր պիտի միանար Ախտա-Շահին բանակին:

— Արաքում գաղան է, ասեց հայրս: — Ի՞նչ
կը լինի մեր մարդկանց ճարը: Չորս կողմում մի
տեղ չը կայ, որ քիչ հանգարտ լինի. ամեն տեղ
թալանում են կոտորում...:

Յետոյ նա աւելացրեց, որ Շահին հրամանը
խիստ է, անողորմ: Ոչ ոքին չը պիտի խնայեն:
Գիտեմ, որ այստեղի բոլոր գիւղերը ուստի
կողմն են և ուզում են պատժել, խիստ պատ-
մել:

— Ով կարող է, պիտի փախչէ, գլուխ ազատէ...
Այս խօսքերը հայրս ասեց համարեա լաց լի-
նելով:

(Կը չարանակովի)

Բացի զբանից, վրաց կանանց ընկերությունը առաջարկում է, ընկերություններ գործունեությունը ընդարձակելուց և հիմնական դրամագումարը մեծացնելուց յետոյ, բանալ թիֆլիսում սեփական արհեստանոցներ և ձեռք բերել անշարժ կալուածքներ: Ընկերությունն հիմնական դրամագումարը կազմվում է անդամական վճարներից: Խաղաղանշուր անդամ պարտաւոր է 10 ր. վճարել: Այդ նոր կազմակերպւոյ ընկերությունն կանոնադրութեան համաձայն, նրա զուտ արդիւնքը հետեւեալ կերպով է գործադրուելու. զուտ արդիւնքի 30% պահեստի դրամագումար մէջ է մտնում, 30% բարեգործական նպատակների համար, մնացած 40%օրից 20% պէտք է որպէս զիւլիդները բաժանվի ընկերությունն անդամներին, իսկ 20%օրից պէտք է կազմվի անձեռնմխելի դրամագումար: Հինգշաբթի, մարտի 14-ին, տեղի ունեցաւ ընկերությունն անդամների ընդհանուր ժողովը՝ պաշտօնական անձինք ընտրելու համար: Վերոյիշեալ ընդհանուր ժողովում ընկերությունն գործերի կառավարիչ ընտրվեց վրաց յայտնի գրող Ե. Վաքաթիա, իսկ գանձապահ՝ տիկին Ն. Վիթիմ-կրելի: Ընկերությունն նախագահուհին է իշխանուհի Օ. Ճալմալաձէ: Ընտրվեցին նոյնպէս և վարչությունն և վերահսկող մասնաժողովի անդամներ:

Մարտի 9-ին, ինչպէս հաղորդում է «Русскія Вѣдомости» լրագիրը, լրացաւ Լազարեան ձեռնարանի դրեկտոր Գ. Քանախովի հասարակական-մանկավարժական գործունեությունն 35-ամեակը: Այդ առիթով յօրեկարար ստացաւ Հնորհաւորութիւններ զանազան հիմնարկություններից, Մոսկւայի հայոց կօլօնիայից, Լազարեան ձեռնարանից և այլն: Նոյն օրը տեղի ունեցաւ ճաշկերպ, ի պատիւ յօրեկարարի:

Թէհրանից, մարտի 17-ից, «Навразъ» լրագիրն հեռագրում է. «Պաշտօնական տեղեկություններով երևում է, որ յայտնի առաջակ Նաբիին սպանել են Ուրմիայում պարսկական պահապան զինուորները»:

Մեր քաղաքն են եկել Գրեվիեցիի ազգանունով քոյր և եղբայր օգաղնացիներ, և մտադրություն ունեն Ջառի երկրորդ շաբաթը «Մուշտախ» այգուց օգաղաբիկով բարձրանալ:

Օրերը տաքանալու հետ միասին սկսում է և կուր դետը բարձրանալ: Ամեն օր արդէն զգալի կերպով նկատվում է բարձրանալը, այնպէս որ մեծ վտանգ է սպառնում Սաղին և կուրի ավերի գանդիլ շինություններին:

Բժշկական «Врачъ» շաբաթաթերթում տպւած է Եգէրի նամակը, որով հաղորդում է թէ ժողովրդական լուսաւորութեան միջնադար թուրքական ընտրություն տալ Մոսկւայի համալսարանի բժշկական քննիչ յանձնաժողովում երկու կանանց Պրօֆեսոր Կոմարովի և Ֆէյսի: Գրանք երկուսն էլ Պարիզի համալսարանի բժշկականության դոկտորներ են: Մինչև բժշկական ֆակուլտէտ մտանելը նրանք այնպիսի և երկ, այսինքն Պարիզում ստացան բակալավրի աստիճան: Այժմ, թուրքական տաճարում ընտրություն տալ քննիչ յանձնաժողովի առաջ, նրանք գիմնեցին Մոսկւայի ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ խընդրելով թուրք տալ իրանց այցելել դասախօսությունները: Նրանց խնդրեց յարգվեց, և տուեցին նրանց ուսանողական աստիճանը: Սակայն այդ աստիճանների մէջ հետադարձ ընդունված է և զբւոյժ է կողմնակի ունկնդրուհի: Նամակի հեղինակը կարծում է, որ կանանց բժշկական նոր բացվելը ինստիտուտի մէջ ունկնդրուհիներ թիւը շատ սահմանափակ լինելու պատճառով, բազմաթիւ կանանց համար մեծ նշանակություն ունի իմանալ թէ մի այդպիսի երե կայ: Մի և նոյն ժամանակ ակամայ հարց է ծագում, թէ երբի ուղղակի արգելք չը կայ թուրք տալու կանանց յաճախել համալսարանական աստիճանները: Ինչու առել են հետո չը գնալ այդ ճանապարհով: «Врачъ»-ի խմբագրությունը չէ կասկածում, որ յանձնաժողովում ընտրություն տալու թուրքական կը ստանան և ուրիշ կանայք, որոնք բժշկական ուսում են առել արտասահմանում:

ԳԱՆՁԱԿԻՑ գրում են «Тифл. Листовъ» լրագիրն, «Հուլի քաղաքի մուսուլման-ընտրողներին

գանդաւոր դուռնայի ձայնաւորներին ընտրութեան դէմ, քննվեց մարտի 16-ին քաղաքային գործերի նահանգական ատենանում, որը միաձայն որոշեց՝ թողնել անհետեւեալ այդ գանդաւորը»:

ՇՈՒՂԱՎԵՐԻՑ մեզ գրում են. «Կիրակի օր, մարտի 17-ին տեղի ունեցաւ մեր օրիորդական զպրոցի խնամակալուհի տիկին Վալենտին Պառաւանի թաղումը, որը վախճանվեց Բերլինում, ուր գնացել էր բժշկվելու: Այդ առիթով մեր հասարակութեան մէջ տեղի ունեցաւ ուշադրութեան արժանի մի փաստ.— հայոց լրագիրներին ընթերցողներին յայտնի է, որ զպրոցի խնամակալ Սիմէոն Պառաւանի և Շուրալիերի հասարակությունն մի մասի մէջ սկսված էր մի կատաղի թշնամութիւն, որ շատ անգամ սպառնում էր հասցնել գործը մինչև արեան: Այդ թշնամութիւնը վերջացաւ կատարեալ հաշտութեամբ, հանգուցեալ տիկնոջ դիակի առաջ: Գիրլի կողմից ընդ առաջ էին դուրս եկել հարկաւոր ձեռնարներ, իսկ գիրլի այգիներին մօտ սպասում էին հաղորդուր ամբողջ և ամանաւորը՝ հասարակութեան պատկը ձեռքին, որի ժապտէնի վրա գրված էր «Անմոռանալի Վալենտին» հայրենի գիրկից»:

Յուրաքանչեւ թուրքական հանդէսը կատարվեց չքեղ կերպով: Գանձապահան խօսեցին քահանայներ՝ թեմական տեսուչ հայր Մեւլանը, որը և պատարագիչ էր, հայր Մարտիրոսն, հայր Սահակներ, ուսուցիչներ Չոբանան և Սուսանան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆԵՐ

Կ. Պօլսից մեզ գրում են. «Խաբարեղի կապան-Մատէն (120 տուն) յունվար 17 թուականով հասած նամակէ մը կը տեղեկացուի թէ հայերը ընդունած են մասնատակաւորութիւնը. երկար ցուցադրով մը կը հաղորդուի նորագործ հայրու մասնատակաւոր անունները: Տէրտէրին աւանդ է Մուլա Մուսթաֆա, կապալներն որ եթէ նամակ գրեն, մասնատակաւոր անունները գործածեն»:

Կ. Պօլսից մեզ գրում են. «Կինձէն կը գրեն թէ սովը արդէն տիրած է այն կողմերը. 48 հոգի անօթութեանէ մեռած են, չուտով օգնութիւն հասնելու համար ալ յոյս չի կայ»:

Կ. Պօլսից, մարտի 19-ից Ռուսաց Գործակալութիւնը հեռագրում է մեզ հետեւեալը. «Գաղտնի կերպով Զէյթուն գէջը տանելը խախտելու համար պատերազմական չորս նաւեր են ուղարկվում»:

Այն օրից, երբ Թուրքիան թուրք տուեց զբաղական օգնութիւն հասցնել փոքր-Սահայի ժողովրդին, նպատակներ ժողովելէն թէ թիւրքաց մայրաքաղաքում, թէ Ալեքսիայում և թէ Անգլիայում Սակայն կարիքն առել է, քան նպատակների քանակութիւնը: Անգլիայում ժողովված է 34 հազար ֆունտ ստերլինգ, որ անգլիացիների ասելով կազմում է պահանջի միայն մի երրորդ մասը:

«НОВОСТИ» լրագիր մէջ կարդում ենք հետեւեալը. «Պղտում շարունակվում են ստացվել տեղեկություններ փոքր-Սահայի հայերի անտեսական ծանր վիճակի մասին: Այրիացած կանանց և որբացած երեխաների դրութիւնը անտանելի է: Բայց հարց է թէ ում կանգնէ և առել դառն— այդ անբաղանջների, թէ այն քառասուն հազար մարդկանց, որոնք իսլամութիւն են ընդունել և որոնք յարմար առիթն են սպասում իրանց եկեղեցու դիրքը վերադառնալու: Մի տեղ նահանգապետը թուրք տուեց իսլամացած հայերին, որ նրանք բանան եկեղեցին, բայց հազիւ թէ հայերը չարժեքներն զգիլ եկեղեցին, թիւրքերը մեծ սպառնալիքով առաջ եկան և արգելեցին»:

ՍՈՒՂԱՆԻ ԴԵՐՎՈՇՆԵՐԸ

Քաղաքական մեծ դէպքը անգլո-եգիպտական պատերազմն է Սուլթանի զէրվիչներին դէմ: Որովհետեւ այդ դէպքը կարող է քաղաքական մեծ բարդութիւններ առաջ բերել, ուստի մենք հարկաւոր ենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այդ խնդրի էությունը:

Աֆրիկայում, Եգիպտոսի և Հաբէշտանի մէջ տեղ գտնվում են մի քանի մասնատակաւոր երկրներ, որոնց մէջ նշանաւոր տեղ է բռնում Սուլթանը, որ մօտ 10¹/₂ միլիօն բնակիչ ունի և որի տարածութիւնը Ֆրանսիայի տարածութիւնից երեք անգամ աւելի մեծ է: Սուլթանը զեռն Մահմէդ-Ալի խեղիվ օրով նուաճվեց և ընկալեց Եգիպտոսի իշխանութեան ներքոյ, այդ գրութեան մէջ նա մնաց մինչև 1881 թիւը, երբ յայտնվեց Մահմէդ և հրատարակեց Սուլթան անկախ պետութիւն և հալածեց եգիպտական զօրքը ու կառավարութիւնը այդ երկրից:

Պէտք է ասել, որ իսլամի կրօնի աւանդութեան համաձայն, մի օր պէտք է յայտնվի մի նոր և ամենամեծ մարգարէ, Մահմէդ, որը պէտք է նուաճէ և վերէն ամբողջ աշխարհը: Դեռ 17-րդ դարում Աֆրիկայի արաբների և մասնատակաւոր ազգերի մէջ այդ հաւատը շատ տարածված էր, այնպէս որ ամբողջ մասնատակաւոր աշխարհը անհամբերութեամբ սպասում էր իսլամի նոր Մէսիայի գաւտեան, երբ իսլամը պէտք է տիրապետէր ամբողջ աշխարհի վրա, բայց այդ յոյսը չիրականացաւ: Այն ժամանակ իսլամ աստուածաբանները յայտարարեցին, որ Մահմէդ յայտնվելու է 200 տարեց յետոյ: Այդ հանդամանքից օգուտ քաղեց խաբուսով քաղաքում իր կրօնական ուսումը աւարտած Մահմէդ-Ալի մանուկ մի արաբ շէյխ, որ ծնվել էր Գոնդուլում 1843 թիւին: Նա 1880 թիւին յայտարարեց իրան էլ-Մահմէդ (վերջին մարգարէ): Շուտով սկսեցին հաւաքվել նրա մօտ մուրացիկներ կրօնաւորները, կամ զէրվիչները: Նոր մարգարէի վարդապետութիւնը արագութեամբ տարածվեց, մասնաւոր նա սրբազան պատերազմ հրատարակեց անհաւատների դէմ և յայտնեց, որ պէտք է ազատի մասնատակաւորներին չուս-բրիտանականներից: Մի և նոյն ժամանակ նա պատերազմ հրատարակեց և հերձուածող թիւրքերի դէմ ու հերքեց սուլթանի խալիֆայութիւնը, ասելով որ թիւրքերը դաւաճանել են իսլամ կրօնին:

Եգիպտոսի կառավարութիւնը, զգալով վտանգը, հրատարակեց Մահմէդին լուստ մարգարէ և որոշեց զսպել նրան, բայց Մահմէդ անբաժնի դօրեղացել էր, որ 1883 թիւին գրաւեց Էլ-Օբէիդը: Այն ժամանակ անգլիական կառավարութիւնը դէմ և ուղարկեց Գիքս զօրապետին կռուելու նրա հետ: Մահմէդի կալիֆի պատերազմի մէջ յաղթեց անգլիական զօրք և ջնջեց ամբողջովին 9000 հոգուց բաղկացած զօրաբաժնի, որից յետոյ ամբողջ Սուլթանը դուրս եկաւ Եգիպտոսի տիրապետութիւնից և ճանաչեց Մահմէդի իշխանութիւնը: Մահմէդ օգնականն էր Օսման-Գիքս, որի հետ միասին նա 1885 թիւին առաւ խաբուսով նշանաւոր քաղաքը և պատրաստվում էր առելու առաջ գնալ, երբ, յանկարծ, մահը վրա հասաւ և վախճանվեց 1885 թիւի յուլիսի 21-ին, իրան յաջորդ նշանակելով իր եղբորորդի Սէլիմին, որը զիմեց Սուլթանի ժողովրդին և հրաւիրեց նրանց կռուել անհաւատների դէմ:

Այդ օրից Սուլթանը կորաւ Եգիպտոսի համար և զէրվիչների թաղաւորութիւնը ներկայացաւ իբրեւ մի մշտական սպանալիք ու վտանգ եգիպտական կառավարութեան համար. մի և նոյն ժամանակ նա մի լաւ առիթ եղաւ Անգլիայի համար յետաձգելու Եգիպտոսից դուրս գալու խնդիրը:

Մահմէդի յաջորդ Աբդուլլահ-Սէլիմը չը կարողացաւ պահպանել իր տիրապետութիւնը և հեղինակութիւնը ամբողջ Սուլթանի վրա և բաւական տկարացաւ ներքին երկպառակութիւններէ: Սակայն Մէնէլիք նեզուսի իտալացիների դէմ տարած յաղթութիւնը նոր ոյժ և ոգի է ներշնչել զէրվիչներին և նրանք որոշել են նահապետաւորութիւն Եգիպտոսի հետ: Այդ պատճառով անգլիական կառավարութիւնը, թէ վերահաս վտանգի առաջն առնելու և թէ խալիֆային օգնելու նպատակով, որոշել է 9000 հոգուց բաղկացած մի զօրաբաժնի ուղարկել զէրվիչների և Աբդուլլահ-Սէլիմի դէմ, որը արդէն մօտեցել է Կասաբլա բերդաքաղաքին և սպասում է գրաւել նրան:

Անգլո-Եգիպտական կառավարութեան այդ ուղղութիւնը հաւանութիւն է ստացել Գերմանիայի և Աւստրիայի կողմից, բայց սաստիկ զօգնութիւն է առաջ բերել Ֆրանսիայում:

ՆԱԽԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Նախսի, մարտի 1-ին

Փետրվարի 29-ին (նոր տոմար), երեկոյան ժամը 8¹/₂-ին, քաղաքի երաժշտական դահլիճում տեղի ունեցաւ առաջին հաշվաւոր երեկոյի, բաղնաթիւ և ընտիր հասարակութեան ներկայութեամբ: Քաղաքապետը, համալսարանի ըէկաօրը և բազմաթիւ ուսուցչապետներ յարգել էին մեր երեկոյի իրանց ներկայութեամբ: Չը նախած, որ երեկոյի կազմված էր ամենակարճ ժամանակամիջոցում և ծանր պայմաններում, նա ունեցաւ ահագին թէ նիւթական և թէ բարոյական աջողութիւն: Կոստանեան և Եվաթով, որոնք յատկապէս եկած էին խալիֆայի մեր նուազահանդէսին մասնակցելու համար, ունեցան մեծ աջողութիւն: Հասարակութիւնը յայտնում էր իր անկեղծ գոհունակութիւնը թէ գերասաններին և թէ կարգադրիչներին:

Խալիֆայից հրաւիրված էր նաև օր. Ջիւսսօ, որը, եղանակի յանկարծակի վատանալու և իր տղերկարութեան պատճառով, չը կարողացաւ կատարել մի այդպիսի երկար ճանապարհորդութիւն: Հասարակութիւնը չը զգաց տաղանդաւոր երգչուհու բացակայութիւնը և բուռն ծափահարութիւններով վարձարեց օր. Stella de la Mart տեղիս կոնսերվատօրիայի ուսուցչուհու քեքշ ձայնը և զգացված երգը: Օրիորդ նոյն իսկ չաբաթ օրը հրաւիրեց փոխարինել օր. Ջիւսսօին և առանց տատանվելու յանձն առաւ կատարել մեր խնդիրը, որով քեշ չաջակեց երեկոյի աջող ելքին: Օր. Lauri Gentil, նոյն զարդի զայնակի ուսուցչուհին, որ ստացել է Պարիզի կոնսերվատօրիայի Վ-րդ մրցանակ, իր պարզ և մաքուր կատարելագործված տէխնիկայով և իմաստալից երաժշտական նախադասութիւններով մէկ անգամ ևս ցոյց տուեց ֆրանսիական երաժշտական չիօլայի արժէքը և իր անձնական մեծ տաղանդը:

Մեր երեկոյին մասնակցեցին քաղաքային բոլոր երաժշտական ընկերութիւնները. Լօտարիդայի թատրօնական ընկերութեան կողմից մասնակցում էր Gaillard, ընկերութեան նախագահը: Իսկ անգլիս Ուսուցչական ընկերութեան թատրօնական ճիւղն իր կողմից ուղարկել էր օր. Lebrun: Երկու տաղանդաւոր կօմիկները ընդունվեցին հասարակութեան կողմից անվերջ խնդումով: Ջիւսսօյական երաժշտութիւնը, որի աշակցութիւնը պարտական ենք նահանգապետի և զինուորական կառավարչապետի բարեացակամութեան, հասարակական տաճարաբուծութեան կերպարանք տուաւ մեր համեստ երեկոյին:

Հանդիսականներին ընդունում էին տեղիս հայ և ֆրանսիական ուսանողները, կրելով իրանց թիկ վրա հայկական գոյներով կազմված ժապաւններ: Հնորհիւ այդ պարաններին, երեկոյի մի առանձին կենդանութիւն առաւ և ամեն ինչ տեղի ունեցաւ նախանձելի կարգապահութեամբ: Թույլ տուէք «Մշակի» միջոցով յայտնել մեր խօրին հնորհապետութիւնը բոլոր վերե յիշած տիկնոջներին և պարաններին, որոնք իրանց պատրաստակամութեամբ և կորովով մեր համեստ երեկոյին երաժշտական հանդիսի կերպարանք տուին: Թույլ տուէք յայտնել մեր ընկերական երախտագիտութիւնը կարգադրիչ յանձնաժողովի ֆրանսիացի անդամներին և մասնաւորապէս գանձապահ օր. Crousse-ին և քարտուղար օր. Guevel-ին, որոնց սպորտական ենք մեր յղացած գաղափարի փառանքը իրաւորմամբ:

Նոյնպէս թույլ տուէք յայտնել մեր խօրին չը նորհապետութիւնը Նանսի հասարակութեան իր յայտնած անվերջ համակրութեան համար, որ մեր միակ միտքարութիւնն է օտարութեան մէջ: Եւ եթէ այսօր մենք չենք կարող դրականապէս յայտնել մեր երախտագիտութիւնը, գոնէ ապագայում վերադառնալով հայրենիք, սիրել կը տանք մեր հայրենակիցներին այն երկրի, որ մեզ ընդունեց զրկաբաց, այն հասարակութիւնը, որ թեթեւեղեց մեր օտարութիւնը, սիրել կը տանք այն ազգը, որ մեզ արժանացրեց իր անկեղծ համակրանքին:

Ի զիմաց կարգադրիչ յանձնաժողովի հայ ուսանողներին՝

Ե. Միստանց

